

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԻՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄՈՒՄ

Շաբաթ 23 Ապրիլին, կեսօրույ ժամը 12.30ին, առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցությամբ բաժանայ Հայրերու և Սարկաւագներու, փութաց Մարթին Փլէյսի Անյայր Զինւորի Յուշարձանի մօր, ծաղկեպսակ զեպեղեց յուշարձանին ու ապա կարարունցաւ Հոգեւորական արարողութիւն, Ապրիլեան եղեռնի ու Անգաքի զոհերու հոգիներուն ի հանգիստ: Ներկայ էին Թեմական Խորհուրդի և Եկեղեցիներու Վարչութիւններու անդամներ, ինչպէս նաեւ զաղութիս հայ համայնքի հաւաքացեալ զաւակները:

Կիրակի 24 Ապրիլին, Մաքուարի Բարբ գերեզմանարան հայկական բաժնի Յուշարձանին առաջ տեղի ունեցաւ Սուրբ և Ամմահ Պապարագ, Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցին առիթով:

Պապարագեց՝ Արժ. Տ. Նորայր աւագ բաժանայ Բաթանեան:

Հոծ բազմութիւն մը ներկայ էր Սուրբ Պապարագին, որոնք եկած էին յարգելու մեր բիւրաւոր նահապարակներու խնկելի յիշատակը:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարոզեց ու թելադրեց ներկայ ժողովուրդին, հաւաքարիմ մնալու մեր նահապարակներու խնկելի յիշատակին և ընթանալու անոնց լուսաւոր ուղիով:

Տեղի ունեցաւ նաեւ Հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւն, նուիրում Ապրիլեան եղեռնի նահապարակներուն, որոնք ինկան վասն մեր քրիստոնէական հաւաքին և մեր ժողովուրդի յարեմացումին:

Նոյն օրը, Ռոքվուրի գերեզմանարան հայկական բաժնի Յուշակոթողին առջեւ տեղի ունեցաւ ոգեկոչում, կազմակերպուած արեւմտեան շրջանի Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչութեան և միութիւններու կողմէ, ապա տեղի ունեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն Ապրիլեան նահապարակներու հոգիներուն ի հանգիստ:

Տեղի ունեցաւ ծաղկեպսակի զեպեղում և զանազան ելոյթներ միութիւններու ներկայացուցիչներու և անդամներու կողմէ:

Առաջնորդ Սրբազան Հօր փակման խօսքով ու «Պահպանիչ»ով վերջ գրաւ օրուայ ոգեկոչումը:

Նոյն օրը երեկոյեան, Ուիլուպի Քաղաքապետութեան սրահին մէջ, տեղի ունեցաւ ոգեկոչում, ուր գործադրութեան դրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Օրուայ գլխաւոր բանախօսն էր տիկին Հիլարա Չոպոյեան: Եղան նաեւ զանազան այլ ելոյթներ, այդ թվում և պետական պարասխանաբար անձնաւորութիւններու կողմէ, որոնք դրուարեցին մեր ժողովուրդի օրինակելի, տիպար և միահամուռ կեցուածքը, յարգելու մեր բազմահազար նահապարակներու խնկելի յիշատակը:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ առաջնորդ Սրբազան Հօր փակման խօսքով ու «Պահպանիչ»ով:

Երկուշաբթի 25 Ապրիլի երեկոյեան, Մաքուարի Համալսարանի սրահին մէջ, ՀԲԸՄԻ կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ ոգեկոչում, ուր գործադրութեան դրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Օրուայ բանախօսն էր Հալեպաքնակ Կոթք. Թորոս Թորանեան, որ մեծ հմարտ-

մեամբ ներկայացուց օրուայ խորհուրդը: Յուշ-երեկոյի աւարտին Արմ. Տ. Նորայր աւագ ժողովի, Բաթանեան իր սրտի խօսքը ըսաւ ու ընթերցեց Ազգիս Վեհափառ Հայրապետ Ա.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը՝ փրութեամբ Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին, ու «Ղահպանիչ»ով փակեց օրուայ Յուշ-երեկոն:

Հինգշաբթի 28 Ապրիլի երեկոյեան, Սիւրբիի Խորհրդարանի շէնքի Հայկական Յուշատարի առջեւ փեղի ունեցաւ յարգանքի յուշ-երեկոյ մը, ուր ծաղկեպսակներ զետեղուեցան, սալա ելոյթ ունեցան պետական ղեմքեր, որու աւարտին, ներկայ Հայ երեք համայնքներու ղեկավարներու հայրերու կողմէ, ՀՈԳԻՈՅ արարասանուեցաւ մեր բիրատու նահապետներու հոգիներուն ի հանգիստ:

Յուշ-երեկոյի աւարտին, Խորհրդարանի սրահէն ներս, փեղի ունեցաւ բանախօսութիւն՝ խոր բանախօս փիլիսոփայ Հիւրա Չոպոյեանի կողմէ, հայ եւ օտար բարձրաստիճան անձնատրուութիւններու ներկայութեան:

Մեր ժողովուրդը, բոլոր ձեռնարկներուն, ցուցաբերեց հայու օրինակելի ընթացք մը, յարգելու մեր բիրատու նահապետներու անմահ յիշատակը:

**ԴԻԻՐՆ ԱՐՄՏՐԱԿՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**